ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ 11-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ, ԲՈԼՈՐ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻՆ

Մայրցամաքային դեպուտատներ, ծանր ու հակասական օրեր է ապրում մեր հանրապետությունը։ Արցախյան հանրաքվեի ձգձգվող հարցը, մեծ երկրաշարժի հետ կապված տոնալի խնդիրները և շինարարության ձգձգումը աղետյալ գոտում, մեզ պարտադրված շաղթականության պրոբլեմները և իր բնույթով անանախադեպ շրջափակումը, որը նույնպես պարտադրվեց մեզ, իրոք որ անելանելիության եզրին են հասցնում մեր Հայաստան երկրի կյանքը, շեղել ու շեղում են բնականոն հունից։ Սակայն որքան էլ շատ ու բազմազան լինեն լուծման կարոտ հարցերը, որանց մեջ չի կարելի անտեսել գոյապահպանության հետ առնչվող խնդիրները։ Մենք այս բոլոր փորձություններից պետք է դուրս գանք ոչ միայն առողջ ճոգով ու տոկուն ոգով, այլև առողջ բնությամբ։ Ուստի և այս դիտակցությամբ ձեզ ենք դիմում մի խնդրով, որը, մեր կարծիքով, շատ կարևոր նշանակություն ունի շրջակա միջավայրի պահպանության իմաստով։ Խոսքը ծաղկաձորյան անտառին սպառնացող վտանգի մասին է։ ավելի շուտ՝ այդ անտառի ճանդեպ օր ցերեկով կատարվող ճանցագործության մասին, որ վերապա մարմինների և հենց Հրազդանի շրջանի ղեկավարության թույլտվությամբ աճա երկարդ տարին է, ինչ շարունակում է սպառային բազայի ղեկավարությունը։

Խոսքը սպառային բազային հարող ամենաթավոտ ու դարավոր անտառում դանուկառոլերային ասֆալտապատ ուղիների կառուցման մասին է։ որին արդեն ըստ ակտի զոն է գնացել երեք հազար ծառ, բեև այդ նվազեցված թվին ոչ ոք չի հավատում։

Շինարարները ու բազայի ղեկավարությունը, օգտվելով մեր հանրապետությունում անցյալ տարվանից ստեղծված բարդ ու անելանելի կացությունից և իրավիճակից, դինված ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ, իսկապես գրոնել են այդ խնդձ անտառի վրա, ոչնչացնելով դարերի ընթացքում աճած ծառերն ու ստեղծված այնքա՞ն անհրաժեշտ բուսահողը, դրանով իսկ նախապատրաստելով անտառի ոչնչացումն ընդհանրապես։ Այդ մասին «Երեկոյան Երևան» թերթի այս տարվա ապրիլի 6-ի խիստ տագնապալի հոդվածը, որով հանդես են եկել փիլիսոփաները Հ. Գևորգյանը, Օ. Գաբրիելյանը և Վ. Բաղդասարյանը, ոչ միայն մնացել է անհետևանք, այլև փաստորեն ահազանգ է ծառայել սպառային բազայի ղեկավարության համար, թե կարող են, հանկարծ, դադարեցնել աշխատանքները, և նրանք նոր եռանդով են գործի անցել։ Այո, գործի են անցել այն դեպքում, երբ հազարավոր բետանիֆներ ներկայումս էվակուացված են աղետի գոտուց և արցունքն աչքերին իրենց տունդարձին են սպասում, և այսօր մեր բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեին նախ և առաջ աղետի գոտու վերաշինությանը և ոչ թե Հայաստանում դանուկառոլերային սպառի զարգացման մասին «հայրենասիրական» զարթոնքի ճառերի արտասանությանը։ Իսկ շինարարությունը շարունակվել է ավելի լայն թափով այն դեպքում, երբ թերթի այդ նյութից հետո Մինիստրների խորհուրդը կազմել է հատուկ հանձնաժողով՝ վերջնական եզրակացության համար։

Տեսնելով գործերի այսպիսի ընթացքը և սպորտաբազայի ու տեղական մարմինների լուռ համաձայնությունը անտառը ոչնչացնելու խայտառակ ակտին, մենք ևս ըստիպված եղանք հանդես գալ նույն թերթի այս տարվա սեպտեմբերի 5-ի համարում «Մորթվող անտառ կամ՝ «էս սարն իմն է, էս ծառն իմն է» ընդարձակ հոդվածով, ուր ըստ գործին առնչվող հիմնական փաստաթղթերի՝ վկայակոչված էր այդ տխուր ու հրեշավոր պատմությունը։ Եվ արդ, հարգելի դեպուտատներ, մենք չէինք կրկնի այդ փաստերը այս օրերին, մանավանդ, երբ այնքան շատ են լուծման կարոտ հարցերը, չէինք զբաղեցնի ձեզ, եթե գոնե այդ հոդվածը սթափեցներ Հրազդանի շրջանի և սպորտային բազայի ղեկավարությանը։ Որ նրանք համառում են և շարունակում իրենց սև գործը, շատ պարզորոշ զգացվեց օրերս տեղի ունեցած Հրազդանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի շա՞տ խնամքով նախապատրաստած նիստում, որը մասնակիցների քանակով ավելի շուտ նստաշրջանի տպավորություն էր թողնում։ Եվ այդ մասնակիցների մեծ մասն այստեղ էր հրավիրվել նմանատիպ հարցադրումների համար. այո՛, թերթի հոդվածը շատ ճիշտ է, սակայն եզրակացությունն է սխալ՝ ոչ մի անտառ էլ չի ոչնչանում։ Ահա նրանց «կովաններից» մեկը. իսկ հոդվածագիրները գիտե՞ն, որ Ֆրանսիայում հազարավոր կիլոմետր անտառային ասֆալտապատ ճանապարհներ կան։ Այսպիսի պնդումը՝ արված Հրազդանի անտառտնտեսության գլխավոր անտառապետի կողմից, առնվազն զավեշտական էր, քանի որ ոչ միայն վիրավորում է ֆրանսիացիների ազգային արժանապատվությունը, այլև կեղծ-դեմագոգիկ է։ Եվ սա ասվում է մի երկրի հասցեին, ուր մտածում են ասֆալտն ընդհանրապես ավտոճանապարհներից հանելու մասին և ուր նույնիսկ դյուրակիր ռադիոընդունիչներով չի թույլատրվում անտառ մտնել, որպեսզի չխրտնեն կենդանիները ու չհեռանան թռչունները։ Եվ կամ՝ նրա այն կեղծ-պաթետիկ բացականչությունը, թե բավական է մեզ զբաղեցնեք ձեր հոդվածներով, թողեք գործ անենք (այսինքն՝ անտառը ոչնչացնենք)։ Կամ՝ ինչո՞ւ ես դեմ մասնակի անտառահատումներին, դա ընդունված է (բայց ինչո՞ւ այս ընկերներին այդ «մասնակի անտառահատման» մոլուցքը բռնեց հենց սպորտբազային կից մասերում)։ Կամ՝ գնացեք տեսեք, թե ինչպես են իրենց անտառները շահագործում Բելոռուսիայում (տեսել ենք, լավ են պահպանում և, բացի այդ, անիմաստ է անտառապատ Բելոռուսիան համեմատել անտառազուրկ Հայաստանի հետ)։ Կամ էլ այսպիսի մեղադրական. դուք վիրավորել եք մեր շինարարների հայրենասիրական զգացումները, երբեք որ ու գիշեր աշխատում են դանկուդինների վրա (մեր ասածն էլ այդ է. հարկ էր աշխատել ոչ թե անտառը ոչնչացնելու վրա, այլ աղետյալ գոտում)։

Նաև այսպիսի մեղադրականներ. ընչո՞ւ հոդվածը չի համաձայնեցվել նախագծողների հետ (իսկ ինչո՞ւ նրանք էլ այդ նախագիծը չէին համաձայնեցրել անտառի օրինական տիրոջ՝ ժողովրդի հետ։ Եվ հետո՝ ի՞նչ իմաստ ուներ այդ նախագիծը պաշտպանել գործկոմի նիստում, երբ այն պիտի պաշտպանվեր այն ժամանակ, երբ շինարարները նախատեսված 5—6 մետր լայնությամբ ասֆալտուղու փոխարեն տեղ-տեղ ամայացնում էին մինչև 30 մետր տարածություն։ Թե՞ նախագծողները լավ էին հասկանում իրենց արածի անհեթեթությունը, քանի որ այդ ո՞ր 6 մետրի վրա կարող են աշխատել հակա ինքնաթափերն ու ավերող մյուս մեքենաները)։ Մեզ նաև մեղադրում էին. ինչո՞ւ էիք լռում այն ժամանակ, երբ գրողների ստեղծագործական տուներ կառուցելիս մի ամբողջ անտառ հատվեց (ամենայն պատասխանատվությամբ կարող ենք ասել, որ ստեղծագործական տունը կառուցելիս միայն ճանապարհին գտնվող 6 կիսափտած ծառ է հատվել, այն էլ՝ Մինիստրների խորհրդի թույլտվությամբ։ Եվ բացի այդ, որպեսզի անտառին որևէ վնաս չհասնի, նախագիծը խախտվել է, և շենքը կառուցվել է 180 աստիճան շրջված։ Եվ այդ է պատճառը նաև, որ ոչ մի սենյակում օրվա և ոչ մի ժամի արև չի ընկնում. ահա ճշմարտությունը)։ Եվ կրկին շատ զարմանալի էր հնչում այն բացատրությունը, թե դանկուդինները պետք է կառուցվեին անպայման անտառում, քանի որ եթե լինեին շրջակա լեռկ սարերի վրա, դանուկառոլերները... կմրսեին։ Փորձում էին հերքել մեր այն պահանջը, թե պետք է ազգայնացնել սպորտային բազան, իբր, որքանո՞վ է համապատասխանում դա ինտերնացիոնալիզմին (այո, պետք է ազգայնացնել, այդպես են վարվել Մերձբալթիկայում և առայժմ ոչ ոք որևէ մեկին չի մեղադրել նացիոնալիզմի մեջ)։ Ու նաև այն ոգևորությունը, թե ԽՍՀՄ սպորտկոմիտեի միջոցներով պետք է տնկվի նոր անտառ (դեռ թող ստացվեն այդ միջոցները, տնկվեն, արմատակալեն տնկիները և նոր միայն այդքան ոգևորվենք, հիշելով իմաստուն ու հայտնի ասացվածքը. «Ճտերն աշնանն են հաշվում»)։ Ահա այլ մեղադրականներ. ինչո՞ւ եք ցանկանում ապացուցել, թե Հրազդանի բնակչությունն անտառ չի սիրում և ոչընչացնում է (բայց մի՞թե հոդվածը նման եզրահանգումների տեղիք է տալիս, երբ ամբողջովին բխում է առաջին հերթին հենց Հրազդանցիների շահերից)։ Ինչո՞ւ եք անտեղյակ մարդկանց ստրեսի մեջ գցում, մի՞թե բերբե ուրիշ գործ չունի (թերթի գործը նաև հայրենի բնությանը պաշտպան կանգնելն է, և ի՞նչ ստրեսի մասին է խոսքը, երբ հենց այս գործի մասնակիցներն են մեզ, իրոք, ստրեսի մեջ գցում։ Եվ ովքե՞ր են անտեղյակները, երբ թերթի խմբագրությունն ամեն օր այնքա՞ն հեռախոսագրեր ու նամակներ է ստանում հիմնականում Հրազդանից ու Ծաղկաձորից, և որոնց հեղինակները պահանջում են դադարեցնել այդ կործանարար շինարարությունը)։

Ահա այդ նիստում հնչում էին նման «մեղադրականներ» և դրանց հեղինակները, ցավոք, ոչ միայն շահագրգռված կազմակերպությունների ներկայացուցիչներն ու ղեկավարներն էին, այլև գործադիր կոմիտեի պատասխանատու աշխատողներ։ Եվ նման դեմագոգիան երբեք էլ չէր կարող օգնել քննարկմանը և չօգնեց։

Այժմ աստծո լույսի նման պարզ է, որ սպորտային բազայի տնօրինությունը, առաջին հերթին շրջանային ղեկավարության թույլտվությամբ, այսօր բոլորին կանգնեցրել է փաստի առջև, շատ վարպետորեն խաղալով վարագույրի հետևում։ Եվ արդեն գործկոմի նիստում շատ անվրդով կարող էին հայտարարել. ի՞նչ եք ուզում, այո, ենթադրենք հոդվածը համապատասխանում է իրականությանը, ենթադրենք, իրոք, սխալ է կատարվել, բայց ի՞նչ կարող ենք անել, երբ աշխատանքները մոտենում են ավարտին, այժմ ինչպե՞ս կարելի է քանդել ասֆալտը կամ հավաքել խիճը։

Այո, սպորտային բազայի տնօրինությունը շատ վարպետորեն է վարվել, օգտվելով հանրապետության ներկա վիճակից՝ իր նպատակները հաջողեցրել է իրականացնել։ Եվ այժմ միայն մեղքը Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Արծրունու վրա բարդելով՝ հարցերը չեն լուծվի։ Նախ, այս կառույցը չի ձեռնարկել Արծրունին և հետո էլ՝ արդեն երկար ժամանակ է, որ նա նախկին է դարձել։ Եվ չէ՞ որ նրա գնալուց հետո կային թերթի ահազանգերը, թեև շատ ուշացումով, արդեն կար նաև բնության պահպանության պետական կոմիտեի (նրան ընդհանրապես պաշտոնապես տեղյակ չէր պահվել այս մասին, թեև եղել էր թերթի առաջին ահազանգը) ակտը, որով անտառույին այսպիսի կոտորածի համար մեղավոր էին ճանաչվել այս գործի հետ առնչված բոլոր կազմակերպություններն ու գերատեսչությունները՝ Մինիստրների խորհրդից սկսած։ Եվ ահա այժմ այս շահագրգռությունների և ինքնագլխությունների համար պետք է պատասխան տան գործի մեղավորները. երանի, ովքեր անտեսելով ամեն մի ահազանգ ու կարգադրություն, անվրդով ու շատ ինքնավստահ շարունակել են իրենց գործը։

Պետք է խստորեն պատժվեն նաև երանի, ովքեր ժամանակին, անսալով մոսկովյան և տեղական չինովնիկների նամակ-կարգադրություններին, դրել են հայրենի բնության աղետման այս պատմության հիմքը։ Ահա թե ինչու այս գործի գլխավոր մեղավորների մի մասը, որ ներկա էր գործկոմի նիստին, ինքնարդարացման համար չէր խորշում ոչ մի միջոցից։ Եվ իզուր էին դեմագոգիկ հայտարարություններ անում ի պաշտպանություն հենց այդ չինովնիկների։ Մենք համոզված ու հավատացած ենք, որ մեր օրերի հիմնական կարգախոսը ամեն գույնի չինովնիկների դեմ անխնա պայքարն է։

Որ սխալ է կատարվել, ընդունում էր նիստի մասնակիցների մեծ մասը, իսկ որ այդ սխալը պետք է ուղղել, դա արդեն սխալ էին համարում, քանի որ դրանով, տեսք-տեսք, մեծ վնաս կհասնի անտառին (անտառի հանդեպ հետին թվով ի՞նչ հոգատարություն)։ Նրանց խոսքերն ու կարծիքները փաստորեն բխում էին իրենց նեղ գերատեսչական շահերից, ձեռքը ձեռք է լվանում աղետալի սկզբունքից և այս գործին իրենց մեղսակցությունից։

Մենք, որպես այս հանրապետության քաղաքացիներ և ընտրողներ, մեր և թերթի ընթերցողների անունից (որոնք նույնպես ձեր ընտրողներն են) պահանջում ենք նստաշրջանից՝ հատուկ օրենք ընդունել Ծաղկաձորի՝ հայրենի բնության այդ գոտարիկ ու անկրկնելի անկյան մասին։ Այդ օրենքով, որով Ծաղկաձորը կդառնա ազգային արգելոց, վերջապես կբացառվեն որոշ պաշտոնյաների «Ես եմ կարգադրել», «Դա իմ գործն է» ընդհանուրի գործին այնքա՛ն վնասաբեր արտահայտությունները, «էս սարն իմն է, էս ծառն իմն է» կալվածատիրական հոգեբանությամբ ներթափանցված գործողությունները և ոմանք այդչափ անպատիժ չեն կգա իրենց։ Այդ դեպքում միայն ծաղկաձորյան բնությունը անխաթար ու անաղարտ կմնա գալիք սերունդների համար։ Սա է պահանջում մեր ազգային արժանապատվությունը, գալիքի հանդեպ մեր հոգատարությունը և ժողովրդի բարձրագույն շահը։ Իսկ անտառին էլ պետք է վերադարձվի իր նախկին տեսքը։

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ
գրող-հրապարակախոս
ՀԱՄԼԵՏ ԿԱՐՃԻԿՅԱՆ
բանաստեղծ-թարգմանիչ
ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ
բանաստեղծ-գրականագետ
ՄՈՎՍԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
տնտեսագետ